

<https://doi.org/10.59982/18294359-25.1-hh-21>

**Հովհաննես Հովակիմի Հովակիմյան**

Ասպիրանտ

ԵՊՀ, Հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոն  
hovhannes.hovakimyan@ysu.am

**Ամփոփագիր**

Վանո Սիրադեղյանի ստեղծագործության անբաժանելի ու կարևոր մասերից մեկը նրա հրապարակախոսությունն է: Անշուշտ, դժվար չէ նրա շատ պատմվածքներում նույնպես գտնել հրապարակախոսական շերտեր, սակայն բուն հրապարակախոսությամբ Սիրադեղյանը սկսեց հանդես գալ համեմատաբար ավելի ուշ: Հեղինակի հրապարակախոսական ժառանգությունը բավականաչափ հարուստ է: Այն անդրադառնում է ինչպես ազգային խնդիրներին, այնպես էլ պատմաքաղաքական ամենատարբեր իրադարձություններին՝ մատնանշելով կարևոր հարցեր, որոնց քննարկումը համարում է կենսական և անհրաժեշտ՝ հասարակության համար:

Սիրադեղյանի հրապարակախոսական ժառանգությունը հատկանշվում է ոչ միայն իր ժամանակի հասարակական, քաղաքական խնդիրներին հատկացված հրատապ արձագանքով ու վերլուծությամբ, այլև յուրահատուկ ոճով ու պատկերավորությամբ: Դա իսկապես գրողի հրապարակախոսություն է, և պատահական չէ, որ Սիրադեղյանի բազմաթիվ հոդվածներ, եթե զանց առնենք թեմաներն ու գաղափարական հարցադրումները, կարելի է վերլուծել նույն այն օրինաչափությունների դիտանկյունից, որով վերլուծելի են նրա պատմվածքները:

Սիրադեղյանի հրապարակախոսության մեջ քննարկված հարցերը բազմաթիվ են, սակայն որոշ հատույթներ մշտապես նրա սևեռակետում են և բարձրաձայնում են չափազանց կարևոր խնդիրներ: Ընդ որում՝ դրանցում արված ընդհանրական դատողություններն ու դիտարկումները ոչ միայն արդիական են, այլև հարստացնում ու ինչ-որ առումով վերաձևում են հայ գաղափարաբանական միտքը:

**Հիմնաբառեր:** Հրապարակախոսություն, գաղափարաբանություն, գեղարվեստական գրականություն, արձակ, ժանր:

**Ներածություն**

Վանո Սիրադեղյանի հրապարակախոսությունը 20-րդ դարի վերջի և 21-րդ դարի առաջին տարիների հայ հասարակական-քաղաքական մտքի մեջ եզակի տեղ է զբաղեցնում: Նրա հոդվածները դուրս են սովորական մեկնաբանությունների և հանրային կարծիքի պարզ արտացոլման շրջանակներից: Սիրադեղյանը



## ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

հրապարակախոսական խոսքը վերածում է մտավորական բանավեճի՝ հաճախ ընդլայնելով օրախնդիր հարցերի դիտարկումը դեպի գրականության, պատմության և մշակույթի խորքերը: Նա խնդիրները դիտարկում է ոչ միայն ներկայով պայմանավորված ժամանակային կտրվածքով, այլ դրանց խորքային արմատներն է որոնում ազգային հիշողության, լեզվի ու մշակութային ինքնության տարածություններում:

Սիրադեղյանի գրիչը հղկված է գրական հայացքով. նրա հոդվածներում հաճախ ենք հանդիպում գաղափարական կամ տեքստային հղումների՝ Եղիշե Չարենցի, Մովսես Խորենացու, Հրանտ Մաթևոսյանի և այլոց ստեղծագործություններին: Այս գրական վկայակոչումները ոչ միայն ձևավորում են Սիրադեղյանի ոճական դաշտը, այլ նաև մատնանշում են նրա փորձը՝ ներկայում դիտարկվող խնդիրները արմատավորելու պատմամշակութային ժառանգության մեջ: Այդ համատեքստում Չարենցի հետ գաղափարական և գեղարվեստական երկխոսությունը դառնում է ոչ միայն տասնամյակների միջև ընթացող մտավոր կապ, այլ նաև ժամանակակից հանրային խնդիրների նոր ձևակերպման ու ըմբռնման միջոց:

Սույն աշխատանքում նպատակ ունենք վերլուծել Վանո Սիրադեղյանի հրապարակախոսական խոսքը՝ հատկապես ուշադրության կենտրոնում պահելով «Դանթեական առասպել» հոդվածը՝ դրա կապը Չարենցի նույնանուն պոեմի հետ, ինչպես նաև գաղափարական այն ընդհանրությունները, որոնք արտահայտվում են թե՛ տեքստային շերտում, թե՛ իմաստային կառուցվածքում: Վերլուծության առանցքում կլինի այն հարցադրումը, թե ինչպես է Սիրադեղյանը վերաիմաստավորում անցյալի պատկերացումները՝ միաժամանակ ժխտելով ազգային պատմության մի շարք կարծրատիպեր և մարտահրավեր նետելով պատմամշակութային իներցիայով առաջնորդվող հանրային պատկերացումներին:

Վանո Սիրադեղյանի հրապարակախոսության մեջ ուշագրավն այն է, որ նա հաճախ ոչ միայն բանավիճում է ժամանակի այսպես կոչված ընթացիկ տեսակետների հետ, այլև փորձում է դրանց հիմքերն ու պատճառահետևանքային կապերը դիտել գրական, երբեմն նույնիսկ մշակութաբանական լայն համատեքստերի մեջ: Շատ հաճախ սա բերում է անցյալի տեքստերի, գաղափարական հարցադրումների, ժամանակին չպատասխանված հարցերի վերարծարծման, որոնք ուրվագծում են քննարկվող խնդրի անցած ճանապարհը: Սա է պատճառը, որ Սիրադեղյանի հրապարակախոսության մեջ պարբերաբար հիշատակվում են Եղիշե Չարենցը, Մովսես Խորենացին, Խաչատուր Աբովյանը, Հրանտ Մաթևոսյանը և ուրիշներ, ընդ որում, առավելապես նրանք, ովքեր իրենց տարբեր ստեղծագործություններում ընդունվածից տարբերվող հայացքով են դիտարկել հայոց պատմության տարբեր ժամանակաշրջանները:

Եթե խնդիրը դիտարկենք 1930-ականներին (նաև հետագայում) Չարենցի ստեղծագործության որոշ հատվածին տրված «ազգային նիհիլիզմ» ձևակերպման տիրույթում, ապա պետք է նկատենք, որ Վանո Սիրադեղյանը նույնպես այդ գծի հետևորդ է: Ընդ որում, խնդիրը չի վերաբերում սոսկ չարենցյան որոշ ձևակերպումների



## ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

կամ գաղափարական թիրախավորումների առկայությանը նրա հրապարակախոսության մեջ: Հարցն այստեղ վերաբերում է գաղափարական թիրախին, և այս առումով, Վանո Սիրադեղյանը նաև չարենցյան գծի ուղղակի շարունակողն է:

«Դանթեական առասպել» հոդվածը իր թիրախավորումներով բազում հղումներ է պարունակում, որոնք մի կողմից ձայնակցում են Չարենցին, մյուս կողմից շարունակում են նրա մոտեցումները ամենատարբեր հարցերին: Ընդ որում, Սիրադեղյանն այստեղ բացի վերնագրից կիրառել է չարենցյան տեքստի ամենատարբեր միավորներ ևս. «Երկիր, որ անցյալը որպես նվիրական դի կրում է շալակին» արտահայտությունը միանգամից հղվում է Չարենցի «Երկիր Նաիրի» վեպին: Ընդհանրություն ունի նաև հետևյալ հատվածը. «Քաղաքների լուսաբացների ու իրիկունների սառը լույսի մեջ սարսռելիորեն ահռելի ու անտեր վեր են հառնում տարիներ առաջ մեռած մեծ երկրի մեռած գործարանների ուրվականները: Անցյալի բետոնակուռ ու մետաղաձուլ ուրվականների, չքավորության գույն առած կվարտալների ստորոտներում՝ գժանոցի բակում մտահոգ ու աճապարանոք զբոսնող գժերի նման հաճում են զրկանքի համազգեստով մարդ արարածներ»: Թեև բերված դիտարկումը ձևակերպումների և պատկերների տեսանկյունից թվում է խիստ ժամանակակից, բայց տեքստը Չարենցի «Դանթեական առասպելի» նմանատիպ պատկերների գրեթե նույնական կրկնությունն է.

«Եվ ահա մի օր, տաժանքոտ ճամփից  
Հոգնած ու դադրած, հանգիստի համար –  
Մենք մտանք Մեռած Քաղաքի շենքից  
Մեռած Քաղաքի փողոցները մառ:  
Սարսափն էր սահում մեր մռայլ դեմքից  
Ու տենդում էր մեր սիրտը դիվահար:

Մեռած Քաղաքում ո՛չ մի մարդ չկար:  
Եվ ամայացած շենքերը ավեր  
Մութ, մահատեսիլ կույրերի նման  
Փորած աչքերով նայում էին վեր:  
Եվ չէին կարող նրանց հանդիման  
Գետին չնայել հայացքները մեր» [Չարենց, 35]:

Տեքստային-ոճական հղումներից զատ՝ Սիրադեղյանն այստեղ գաղափարական նույն թիրախներն է շեշտում, ինչ Չարենցը «Պատմության քառուղիներ» պոեմում, այն տարբերությամբ, որ Չարենցի գնահատականները միտված են ներկայում և էլ առավել ապագայում նույն սխալները չկրկնելուն, իսկ Վանո Սիրադեղյանը պարզապես



## ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

արձանագրում է՝ ըստ ամենայնի այդ խնդիրների հետ մեկտեղ արձանագրելով Չարենցի զուր ջանքը:

Թվում է, թե Սիրադեղյանի ընդհանրացումներին և ձևակերպումներին պետք վերաբերվել՝ նկատի առնելով որոշակի ծայրահեղացման միտումը: Մանավանդ որ նա չի խորշում հատկապես ընդգծել հասարակական համընդհանուր մտածողության ու ըմբռնումների այնպիսի հատույթներ, որոնք ավանդաբար, այսպես ասած, անձեռնմխելի են. «Այդ երկիրը իր հաղթական բանակը գրկել է զորապետերից, գնդակահարել ու բանտարկել է եւ էլի արյուն է ուզում, որովհետեւ ծարավը շփոթել է քաղցի զգացողության հետ: Այդ երկրի բանակը պահում է մի հողակտոր, որի վրա ավելի քիչ բնակիչ է մնացել, քան հողը պահող զորքի թիվն է: Այդ երկիրը իրեն գրկում է վաղվա բանակից, որովհետեւ ինքն իրեն գրկում է սերունդը շարունակելու ընդունակ բնակչությունից: Այդ երկրում ոչ թե ծնողներն են պահում երեխաներին, այլ դեռահաս աղջիկներն են (մասամբ) մի կերպ պահում ծնողներին, քույրերին ու եղբայրներին, իսկ տղաները խաղաղ զորանոցներում զոհվում են նույն չափով, որքան ռազմաճակատում պատերազմի տարիներին» [Սիրադեղյան, Դանթեական առասպել, 5]: Այս հանգամանքը ավելի է ընդգծում Սիրադեղյանի խոսքի թիրախայնությունը, այն է՝ անպայման տեղ հասցնել ասելիքը: Հասարակական հարցերը սովորաբար ակնարկներով չեն լուծվում: Երբեմն անհրաժեշտ է ճշմարտության դառը մատուցումը, և Վանո Սիրադեղյանը հենց այդ ճանապարհով է գնում՝ դիպչելով ամենացավոտ և ամենազգայուն երևույթներին:

Չարենցյան «Դանթեական առասպելի» առաջին հրատարակությունը պարունակում էր դաժանագույն մի հատված հայերի գործած ոճիրների մասին, որը բանաստեղծը հետագայում հանեց պոեմից.

«Եվ, սատանայի քրքիջով համառ,  
Քաշեցի ճերմակ մազերը ես մոր.  
—վերցրու՛, պառա՛վ, վերցրու՛, հիմար,—  
Ես քրքջում եմ, տե՛ս, անգութ, անամոթ.  
Հե՛յ, դո՛ւ էլ քրքջա, խնդա՛ խելագար,  
Խնդա, ծիծաղիր ու պարիր դիվոտ...

— Թքի՛ր քո մեռած բալեքի վրա  
և մոխի՛ր ցանիր վարսերին քո ծեր,  
և անեծք կարդա անունին նրա,  
որ այս մեղքերին պատճառ է դարձել...  
Քրքջա՛, ծիծաղի՛ր, միամի՛տ Եվա,—  
Չէ՛ որ դո՛ւ ես մեղքն ուսերիս բարձել...» [Չարենց, 35]:



## ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Սա, ըստ ամենայնի, Չարենցի ինքնաքննադատությունն էր, որը միտված էր սթափեցման, իսկ դրա գործնական ազդեցության համար բանաստեղծն ընտրել էր մեր ազգային նկարագրին, պատկերացումներին ու արժեհամակարգին անհարիր դրվագներ: Իր հոդվածում Վանո Սիրադեղյանը գնում է «Դանթեական առասպելի» կրճատված հատվածի գաղափարական հետքերով: Երկու դեպքում էլ ելակետը նույնն է. ազատվել անցյալի բեռից և չտառապել բացառիկության բարդությից: Հեղինակը գրում է. «Այդ երկիրը չորացնում է իր դուստրերի արգանդը, կոտորում է իր արու զավակների մեջքը, զրկում է իրեն ապագայից, բայց ձեռ չի քաշում իր եղերական անցյալից: Չի մոռանում այդ անցյալը, այլ որպես նվիրական դի կրում է շալակին, որպես երկանքի քար կախել է կրծքին եւ դաժանաբար շարունակում է դնել իր սերունդների, իր երեխաների վզին» [Սիրադեղյան, Դանթեական առասպել, 5]: Այլ խոսքով՝ Վանո Սիրադեղյանը, առաջին հայացքից կրկնելով «Դանթեական առասպել» ձևակերպումը, ըստ ամենայնի, վերաձևակերպում է այն: Դա ոչ թե այն ճանապարհն է, որի միջով մեզ անցկացնում են, այլ այն ճանապարհը, որով կամովին անցնում ենք մենք: «Դանթեական առասպելը» մեր ընտրությունն է:

Այս մոտեցումը, ի դեպ, ոչ թե սահմանափակվում է նշված հոդվածի շրջանակում, այլ տարբեր ձևակերպումներով առկա է Սիրադեղյանի այլ հոդվածներում ևս: Ընդ որում, անկախ հոդվածի թեմայից և տվյալ պահի հասարակական, քաղաքական իրադրության շուրջ քննարկումներից, Սիրադեղյանը այդ մոտեցմամբ է ընդհանրացնում ասելիքը:

«Վերջին պահին որոշում ընդունում են ուրիշները» հոդվածը ասվածի վկայություններից է: Այստեղ Սիրադեղյանն անդրադառնում է հայկական դիվանագիտության ընթացիկ խնդիրներին, Արևմուտքի, Ռուսաստանի, Թուրքիայի վերաբերմունքների բնույթին: Քննարկված հարցերի մեծ մասն այսօր ունի պատմագիտական արժեք, սակայն ընդհանրացումների բնույթը կրկին բխում է մեր ժողովրդի անցյալը գերազնահատելու, անցյալից կառչած մնալու, ազգային սնապարծության՝ ըստ Սիրադեղյանի, չափազանց վտանգավոր դրույթներից:

Ընդ որում, այստեղ ընդհանրացման հենք է «ազգային նիհիլիզմի» մյուս նշանավոր դեմքի՝ Հրանտ Մաթևոսյանի տեքստը. «Հրանտ Մաթևոսյանը հայկական ջարդերի առիթով գրում է, թե՛ բա գաս, խավար, վտանգներով լեցուն միջնադարով գաս հասնես 20-րդ լուսավոր դարի շեմին ու կոտորվե՛ս...»

Բա հիմա գաս, հասնես երրորդ հազարամյակի շեմին ու քո 2000 տարվա փորձից մի դաս չքաղե՛ս: Այդ 20 դարերի ոչ մի հատվածում, ոչ մի ճակատագրական պահի չկարողանա՛ս մի քայլ ետ կանգնես ժամանակին, մի դաշնակից ավելացնելով՝ մի թշնամի պակասեցնես, մի վիրավորանք կուլ տաս, որ հաջորդ 100 տարին չմեռնես ամոթից, մի զոհ տաս՝ 1000-ը խնայես, մի գյուղ տաս՝ 1000-ը պահպանելու համար:

Բա այսքան պարտություն կրես ու հաղթել չսովորե՛ս: Պարտվելը ի՞նչ է, որ պարտվել չսովորես և ամեն պարտություն վերածես արհավիրքի» [Սիրադեղյան, Վերջին պահին որոշում ընդունում են ուրիշները, 7] (Ի դեպ, Սիրադեղյանի հոդվածի այս հատվածը գաղափարական ու նաև ոճական տեսնկյունից այնքան ներդաշնակ է Հրանտ



## ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Մաթևոսյանի ոճի ու գաղափարական թիրախների հետ, որ հատկապես էլեկտրոնային մամուլում և տարբեր սոցկայքերում շրջանառվել ու շրջանառվում է իբրև Հրանտ Մաթևոսյանի տեքստ):

Հոդվածում քննարկված խնդիրների տեսանկյունից այս ընդհանրացումը կարող է հնչել իբրև ուղերձ, սակայն Վանո Սիրադեղյանի հրապարակախոսության գաղափարական ընդհանուր հայեցողության տեսանկյունից սա դիրքավորում է, համոզմունք, որը զարգացումի, ճանապարհի այլ ելք գրեթե չի նախանշում:

### ***Եզրակացություն***

Վանո Սիրադեղյանի հրապարակախոսությունը աչքի է ընկնում պատմական, գրական և մշակութաբանական համատեքստերի լայն ընդգրկմամբ: Հեղինակը ժամանակի հրատապ հարցերին անդրադառնում է ոչ միայն ընթացիկ կարծիքներին հակադրվելով, այլև փորձելով հասկանալ դրանց արմատները՝ խարսխելով դրանք ազգային մտածողության, անցյալի տեքստերի ու գաղափարների վրա: Նրա հրապարակախոսական լեզուն հաճախ բերում է գրական զուգադրությունների, որտեղ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Եղիշե Չարենցի գործը: Սիրադեղյանի մոտեցումը հենվում է ոչ միայն ձևի և պատկերային կառուցվածքի վրա, այլև գաղափարական ուղղությունների վրա, որոնց նպատակը հասարակական մտածողության սթափեցումն է: «Դանթեական առասպել» հոդվածում նկատելի է այս ուղղության գազաթնակետը, որտեղ հեղինակը վերաձևակերպում է չարենցյան մոտեցումները՝ դրանք տեղափոխելով ժամանակակից հասարակության համատեքստ: Նրա հստակ քննադատությունը, ոճի սրությունը և անխնա ճշմարտախոսությունը նպատակ ունեն բացել հասարակության ցավոտ կետերը, որպեսզի հնարավոր դառնա վերարժևորել ներկան՝ ազատվելով անցյալի հոգեբանական ծանրություններից:

Վանո Սիրադեղյանի հրապարակախոսությունն առնչվում է Չարենցի գրական և գաղափարական ժառանգությանը՝ վերաձևակերպելով այն ժամանակակից իրականության խնդիրների հայեցանկյունից: Սիրադեղյանն իր խոսքի մեջ հենվում է անցյալի մեծերի մտածողության վրա՝ միաժամանակ չկաշկանդվելով դրանք վերաիմաստավորելու և կասկածի տակ առնելու մեջ: Նրա հրապարակախոսությունը միտված է ոչ միայն անցյալի քննությանը, այլև ապագայի կառուցման հնարավորությունների բացահայտմանը: Այդպիսով, Սիրադեղյանի խոսքը հանդես է գալիս որպես հասարակական ինքնագիտակցության վերակառուցման փորձ՝ պատմական փորձառության, ազգային հիշողության և հասարակական անտարբերության խաչմերուկում:



**Գրականության ցանկ**

1. Չարենց Ե., Երկերի ժողովածու: Երկերի ժողովածու: Հատոր երկրորդ: Էպիքական պոեմներ: Մոսկվա, Տպ. խորհրդ. Հայաստանի Կուլտուրայի տան, 1922, 280 էջ:
2. Սիրադեղյան Վ., Վերջին պահին որոշում ընդունում են ուրիշները, Հայկական ժամանակ, 2000, դեկտեմբերի 6, թիվ 206:
3. Սիրադեղյան Վ., Դանթեական առասպել, Հայկական ժամանակ, 2000, դեկտեմբերի 16, թիվ 215:

**IDEOLOGICAL ISSUES IN VANO SIRADEGHIAN'S DANTEAN MYTH**

**Hovhannes Hovakimyan**

*PhD Student*

*YSU, Chair of History and Literary Criticism of Modern Armenian Literature*

**Abstract**

*One of the integral and significant parts of Vano Siradeghyan's literary work is his journalistic writing. Certainly, it is not difficult to detect journalistic layers in many of his short stories as well, but Siradeghyan began to engage in journalism proper comparatively later. The author's journalistic legacy is quite rich. It addresses both national issues and various historical-political events, highlighting important matters whose discussion he considers vital and necessary for society.*

*Siradeghyan's journalistic legacy is characterized not only by its urgent responses and analyses of the socio-political issues of his time but also by a unique style and vivid imagery. This is truly a writer's journalism, and it is no coincidence that many of Siradeghyan's articles—aside from their themes and ideological questions—can be analyzed through the same principles applied to his fictional prose.*

*The range of issues addressed in Siradeghyan's journalistic work is wide, yet certain subjects remain a constant focus, highlighting particularly important problems. Moreover, the general judgments and observations made in these texts are not only relevant but also enrich and, in some ways, reshape Armenian ideological thought.*

**Keywords:** Journalism, ideology, literary fiction, prose, genre.

Ներկայացվել է՝ 04.04.2025թ.  
Ուղարկվել է գրախոսման՝ 29.05.2025թ.